



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԼՈՒՈՒ ՄԱՐԶ**  
**ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

☒ 2001, ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040, 0322 22648,  
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

N 062/2427 12 մարտ 2019թ.

**ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**  
**ՄԱՐԶՊԵՏ**  
**ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ**

Հարգարժան պարոն Ղուկասյան

Հայտնում եմ, որ 2019թ. մարտի19-ին տեղի է ունենալու Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստը, որտեղ ներկայացվելու է համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունը:

Կից ներկայացվում է օրակարգը:

Առդիր՝ 2 էջ:

Հարգանքով՝

12.03.2019

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

### ՎԱՆԱՃՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 19.03.2019Թ. ՀԵՐԹԱՎԱՆ ՆԻՍՏԻ

« 19 » մարտի 2019թ.  
Ժամը՝ 11.00

1. Վանաձոր համայնքի ավագանու 2019թ. մարտի 19-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին  
զեկ. Մ.Ասլանյան
2. ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2018 թվականի բյուջեի կատարման տարեկան և հաշվետու տարում 2018-2021թթ՝ զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ 2018 թվականի հաշվետվությունները հաստատելու մասին  
զեկ. Վ.Գրիգորյան  
զեկ. Լ.Դավթյան
3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2018 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին  
զեկ. Լ.Դավթյան
4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին  
զեկ. Լ.Դավթյան
5. Վանաձոր համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 129-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին  
զեկ. Վ.Գրիգորյան
6. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում Վանաձոր համայնքի ավագանու խմբակցությունների փորձագետների և գործավարների ժամանակավորապես հաստիքներ նախատեսելուն համաձայնություն տալու և աշխատակիցների աշխատավարձի չափեր սահմանելու մասին  
զեկ. Ա.Օհանյան
7. Վանաձոր համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 29-ի թիվ 28-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին  
զեկ. Ա.Օհանյան
8. Վանաձոր համայնքի ավագանու անդամ \_\_\_\_\_ լիազորելու վերաբերյալ  
զեկ. Ա.Հովհաննիսյան
9. Վանաձոր համայնքի ավագանու անդամ \_\_\_\_\_ լիազորելու վերաբերյալ  
զեկ. Ա.Հովհաննիսյան
10. Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 105-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին  
զեկ. Գ.Բաղյան

11. Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 103-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին  
զեկ. Կ.Պառավյան
12. Վանաձոր համայնքի «Նեցուկ ՀԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով գույք հանձնելու մասին  
զեկ. Վ.Դավիթավյան
13. Համայնքային սեփականություն հանդիսացող աղբատար մեքենան վարձակալությամբ հանձնելու մասին  
զեկ. Վ.Դավիթավյան
14. Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին  
զեկ. Ս.Աբովյան
15. Վանաձոր համայնքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 121 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին  
զեկ. Ս.Աբովյան
16. Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող, Զորյան փողոցի թիվ 24 հասցեում «Վանաձորի Ստեփան Զորյանի տուն-թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության զբաղեցրած հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու, հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոխելու և փոստային հասցե տրամադրելու մասին  
զեկ. Ս.Աբովյան
17. Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գներին համաձայնություն տալու մասին  
զեկ. Ս.Աբովյան
18. Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին  
զեկ. Մ.Ասլանյան